# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի**
**Նոր Խաչակապ համայնք, հասցե գ.Նոր Խաչակապ,**

**Հեռախոս՝ 093207656**
2019թ.«02» ապրիլի
N 86

ՀՀ Լոռու մարզպետ՝
պ-ն Ա.Ղուկասյանին

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի թիվ 06-Ա որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Համայնքի ղեկավար Ս.Տռուզյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնք,
հեռ. **093-20-76-56**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«29»** մարտի **2019** թվականի **N 06-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ կետով,35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով,41-րդ հոդվածով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի <<դ>> կետով,<<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի <<ե>> կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 14.03.2019թ. թիվ 01/107.4/01739-2019 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի 2018 թվականի գործունեության արդյունքների ամփոփման ժամանակ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների պլան-ժամանակացույցը համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:
3. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Նոր Խաչակապ համայնքի ղեկավարին:

Համայնքի ղեկավար Ս.Տռուզյան

Հավելված.

ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ

համայնքի ղեկավարի 2019թ. մարտի 29-ի

թիվ 06-Ա որոշման

# ՊԼԱՆ-ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ ը/կ | Հանձնարարականներ և առաջարկություններ | Պատասխանատու | Կատարողներ | Կատարման ժամկետը | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Համայնքի ջրամատակարարման համակարգի ցանցի վրա անհրաժեշտ հակահրդեհային ջրածորանների (հիդրանտների) կամ այդ նպատակի համար մոնտաժված լցավորող ծորակների տեղադրում և շահագործում: Չգործող հրշեջ-հիդրանտների վերանորոգում | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Համայնքի ղեկավար | Տարվա ընթացքում | |
| 2. | Համայնքի կապի և ազդարարման համակարգի արդիականացում՝ | Լոռու մարզային փրկարարական | Համայնքի ղեկավար | Տարվա | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | էլեկտրական շչակների ձեռք բերում, դրանք կենտրոնացված ազդարարման համակարգին միացում | վարչության պետ | | ընթացքում | |
| 3. | Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանների մշակում | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Համայնքի ղեկավար | Մինչև 01.12.2019թ. | |
| 4. | ԱՌԿ պլանավորման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում (համայնք, դպրոց) | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Յուրաքան-չյուր եռամսյակ | |
| 5. | Գործող ԱՌԿ պլանների վերանայման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում՝ (նշելով նաև ԱՌԿ պլանների միջոցառումների արտացոլումը զարգացման ծրագրերում) | Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Համայնքի ղեկավար | Տարին մեկ անգամ | |
| 6. | Համայնքի զարգացման ծրագրում և համայնքային բյուջեում աղետների ռիսկի կառավարման բաղադրիչների ու միջոցառումների ընդգրկում | Լոռու մարզպետի տեղակալ, Լոռու մարզային փրկարարական վարչության պետ | Համայնքի ղեկավար | Մինչև 01.12.2019թ. | |

Համայնքի ղեկավար Ս.Տռուզյան